

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման բաց ՄՐՑՈՒՅԹ

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) տարածազանահատման գոտին	Ծածկագիրը Մակերեսը (քմ)	Վարձակալության տրամադրման ժամկետը	Վարձավճարի տարեկան մեկնարկային չափը	Օգտագործման նպատակը	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Տարածքի այլ սեփականատերի և օգտագործողների տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի միավորների դրանց առկայությամբ պայմանավորված սահմանափակումների և սերվիտուտների վերաբերյալ		
1	Արշակունյաց պողոտա հ. 28/27 5-րդ գոտի	Վ 2019-01 2165.15 քմ	3 տարի, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքը ներառված է նախագծային ճանապարհի համար առանձնացված հողամասի սահմաններում, դրա շինարարական աշխատանքները սկսվելու հետ պայմանավորված, վարձակալության պայմանագիրը վարձատուի կողմից էնթակա է միակողմանի դադարեցման:	4 800 000 դրամ	ընդհանուր օգտագործման տարածքները դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու, տարածքի բարեկարգման և 35-50 մ բարձրության վրա ռեստորանի կազմակերպման (տեղադրման) համար	բնակավայրերի, ընդհանուր օգտագործման տարածք	անհրաժեշտության դեպքում իրականացնի տարածքով անցնող ստորգետնյա և վերգետնյա այլ հաղորդակցողիների տեղափոխման աշխատանքները	տարածքի բարեկարգումն իրականացնել նախապես համաձայնեցված էսքիզային նախագծի համաձայն	չկան

- 1, Մրցույթի մասնակցել ցանկացող անձիք մրցույթի ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանի անցագրային սենյակում՝ Արգիշտի 1 I հարկ (մուտքն աշտարակի կողմից), ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:
- 2, Մրցույթի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ.514173):
- 3, Մրցույթի հայտերն ընդունվում են փակ ծրարի վրա նշված ծածկագրով, 2 օրինակից և ներկայացնողին տրվում է հայտը ընդունելու վերաբերյալ ստացական:
- 4, Մրցույթին ներկայացվող հայտի փաստաթղթերի ցանկի տրամադրումը և հայտերի փակ ծրարներով ընդունումը կատարվում է Երևանի քաղաքապետարանում՝ Արգիշտիի հ. I II հարկ (մուտքն աշտարակի կողմից) բոլոր աշխատանքային օրերին ժամը 09,00-ից 16,00-ը մինչև 2019թ մայիսի 27-ը ներառյալ:
- 5, Մրցույթի հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ ներկայացնող հայտատուն:
- 6, Մրցույթի հայտերը բացվում են 2019թ մայիսի 30-ին ժամը 16:00:
7. Մրցույթի հայտերը ամփոփվում են 2019թ. մայիսի 30-ին, ժամը 17:00:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 (ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ